ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 148-Ա «15» մարտի 2023թ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ <<ՄԵՐԻ ՄԻՆԱՍՅԱՆ>> ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՒՅՔԸ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-31/22-2 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ՝ Գնորդ) և <<Մերի Մինասյան>> Անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Մատակարար) միջև 2022 թվականի նոյեմբերի 3-ին կնքված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցների դասարանների կահավորման համար անհրաժեշտ գույքի մատակարարման N ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-32/22-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) <<Կողմերի իրավունքները և

պարտականությունները>> բաժնի 2.1.1-րդ կետի և 2.1.7-րդ կետի 2.1.7.1-րդ ենթակետի <<բ>> պարբերության, և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթական և մշակութային պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Համբարձում Սաֆարյանի 2023 թվականի մարտի 7-ի N Ն/594-2023 զեկուցագիրը

հրամայում եմ՝

1. Պայմանագիրը լուծել միակողմանի (մասնակի) չմատակարարված ապրանքների մասով:

2. Մատակարարին առաջարկել՝ չմատակարարված ապրանքների համար վճարել Պայմանագրի մաս կազմող հավելված 5.1-ի տուժանքի մասին համաձայնագրով (պայմանագրի ապահովում) և հավելված 4.2-ի տուժանքի մասին համաձայնագրով (որակավորման ապահովում) նախատեսված գումարները և վճարել Պայմանագրի 6.2-րդ կետով սահմանված տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

16.03.2023

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ